

## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material


14663

# Վ. Ա. Ի. ԵՐԱԹՈՒՂԹԵՐ

Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԼՈՆԴՈՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ԵՒ

## ԱԲԳԱՐԵԱՆ ԱԻԱՆԴԻ



### ԿՈՆԴԱԿՆԵՐ

1. Կենտրոնական Յանձնաժողովը հիմնող Հայրապետական Կոնդակ
2. Ս.բգարեան Ա.ւանդը հաստատող Հայրապետական Կոնդակ
3. Կենտրոնական Յանձնաժողովը ընդլայնող Հայրապետական Կոնդակ

### ԱԻԱՆԴԱԳԻՐՆԵՐ

1. Հիմնական Ա.ւանդագիր
2. Յաւելուածական Ա.ւանդագիր

### ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆՔ

1. Ներքին Կանոնագիր Կենտրոնական Յանձնաժողովի
2. Ներքին Կանոնագիր Գործադիր Մարմնի

### ԱՆԳԼԻԵՐԷՆ ԲՆԱԳԻՐՆԵՐ


1. Principal Apcar Trust Deed
2. Supplemental Apcar Trust Deed

347.6  
Ս-97

### Վ Ա Ի Ե Ր Ա Թ Ո Ւ Ղ Թ Ե Ր

Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԼՈՆԴՈՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ  
ԵՒ

### Ա Բ Գ Ա Ր Ե Ա Ն Ա Ի Ա Ն Դ Ի



#### ԿՈՆԴԱԿՆԵՐ

1. Կենտրոնական Ֆանձնաժողովը հիմնող Հայրապետական Կոնդակ
2. Արգարեան Աւանդը հաստատող Հայրապետական Կոնդակ
3. Կենտրոնական Ֆանձնաժողովը ընդլայնող Հայրապետական Կոնդակ

#### Ա Ի Ա Ն Դ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

1. Հիմնական Աւանդագիր
2. Յաւելուածական Աւանդագիր

#### Ն Ե Ր Ք Ի Ն Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ի Ր Ո Ւ Ք Ի Ի Ն Ք

1. Ներքին Կանոնագիր Կենտրոնական Ֆանձնաժողովի
2. Ներքին Կանոնագիր Գործադիր Մարմնի

#### Ա Ն Գ Լ Ի Ե Ր Է Ն Բ Ն Ա Գ Ի Ր Ն Ե Ր

1. Principal Apcar Trust Deed
2. Supplemental Apcar Trust Deed

2010

2008

ԳԼՈՐԳ Ե  
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ  
ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ  
ԱՄ. ՀԱՅՈՑ  
ՈՒՅԱ. = 1912

ԳԼՈՐԳ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ ԿԱՄՕՔՆ  
ԱՍՏՈՒԾՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅ-  
ՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԻ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾՄԱՐ ԱՌՈՒՈՅ ԱՐԱՐԱՏ-  
ԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷԶՄԻԱԾՆԻ:

Մեծարգոյ անդամոց Կենտրոնական Յանձնախմբի յանուն Մայր Աթոռոյ  
Սրբոյ Էջմիածնի, սիրելեաց մերոց՝ հոգևոր զաւակացս Աւետումի Յակոբեան,  
Պատուականի Մատուրեան, Ներսիսի Կիւլպէնկեան, Գէորգայ Միքայէլեան,  
Սարգսի Ետզար և Անիկտոսի Ունճեան ողջոյն և օրհնութիւն հայրապետական:

Ընկալեալ գլխաւորաբար զրութիւն և զգեկուցումն Կաթողիկոսական Պատ-  
ուիրակի Մայր Աթոռոյս Գերապատիւ Տ. Գրիգորիս Եպիսկոպոսի Պալաքեան,  
մխիթարութեամբ և զօհունակութեամբ սրտի իրազեկ եղաք, զի Դուք, սիրելի  
որդեակք մեր, սիրայօժար կամօք ստանձնեալ էք կատարել զՀայրապետական  
Կոնդակն մեր ի 24-ն Փետրուարի 1925 ամի, ընդ համարաւ 84, որ վասն ա-  
պահովելոյ զկրօնական և զկրթական հաստատութիւնս և զօգտաւէտ ձեռնար-  
կութիւնս Մայր Աթոռոյս տոկոսաբեր հիմնադրամով, յորմէ իսպառ զրկեալ կայ  
այժմ Սուրբ Էջմիածինն: Այդու եղանակաւ միայն, որ յաջողեցէ սրտեռանդն  
օժանդակութեամբ Չերով և նուիրատուութեամբ և կտակադրամովք ազգասէր և  
Ղերմեռանդ զաւակաց մերոց, մեք մարթասցուք ըստ արժանւոյն հոգալ զպէտս  
և զկարիս Մայր Աթոռոյս ընդհանրական Հայրապետութեան Հայոց, կազմա-  
կերպելով և պահպանելով զհոգևոր բարձրագոյն դպրոց, որ յոյժ անհրաժեշտ է  
միշտ, յատկապէս յայսմ ժամանակիւ, վասն զոյութեան և պայծառութեան  
ազգային Եկեղեցւոյս և վասն դաստիարակութեան զաւակաց մերոց ըստ կրօնա-  
կանի և ըստ բարոյականի:

Արդ, այսու Հայրապետական Կոնդակաւս հաստատեմք զձեզ ի պաշտա-  
ման Կենտրոնական Յանձնախմբի յանուն Մայր Աթոռոյս Սրբոյ Էջմիածնի, ընդ  
նախազանութեամբ պատուիրակի մերոյ Տ. Գրիգորիս Եպիսկոպոսի՝ վասն թեմին  
Հայոց Եւրոպիոյ:

Ձոյգ ընդ ամին ծանուցանեմք սիրելեացդ մերոց, զի հաճ և հաւան զըտ-  
եալ մեր ընդ Կանոնադրութիւն Կենտրոնական Յանձնախմբիդ, լի յուսով և բա-  
րեմաղթութեամբ հաստատեցաք զայն ի գործադրութիւն:


Ի դէպս անհրաժեշտութեան կարէք հրաւիրել նաև զայլս յազգայնոց մե-  
րոց ի գործակցութիւն Կենտրոնական Յանձնախմբիդ:

Ի Է Ի Բ Բ Բ

52876-ահ



38771.67



Յամենայն սրտէ մերմէ օրհնեմք զձեզ և զնուիրատու ազգայինս, զհա-  
րազատ որդիս մեծի Աթոռոյս և մաղթեմք ի Տեառնէ պարզել ամենեցուն կար  
և զօրութիւն վասն ի կատար ածելոյ յաջողութեամբ զազգային-կրօնական և  
գործազան պարտիս առ Սուրբ Էջմիածին և առ Հայրապետութիւն հանուրց  
հայոց ի պայծառութիւն և ի փառս Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկե-  
ղեցոյս և յերջանկութիւն հաւատացեալ ժողովրդեան մերոյ սիրելոյ:  
Տէր Աստուած յաջողեցէ զբարի գործս ձեռաց ձերոց, ամէն:

(Ստորագրութիւն) ՎՇՏԱԼԻ ԳԷՈՐԳ Ե ԾԱՅՐԱԳՈՅՆ  
ՊԱՏՐԻԱՐԲ ԵՒ ԿԱՔՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ  
ՀԱՅՈՑ

ի 11—ն Յունիսի 1926 ամի,  
Ըստ Տումարիս ՌՅՀԵ.  
ի Հայրապետութեան Մերոյ ԺԵ ամի.  
յԱրարտեան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի.  
ի Վաղարշապատ.  
Թ. 448.

Կնքեմ.  
Անդամ Գերագոյն Հոգևոր Խորհրդոյ՝  
(Ստորագրութիւն) ԲԱԳՐԱՏ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

(ԿԱՔՈՒՂԻԿՈՍ ԱՄ. ՆՇԱՆ)

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԲ  
ԵՒ ԿԱՔՈՒՂԻԿՈՍ ԱՄ. ՀԱՅՈՑ

ԳԷՈՐԳ Ե-րդ Ծայրագոյն Պատրիարք եւ Կաթողիկոս Ամենայն Հայոց  
եւ Պետ Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցոյ Հայրապետական ողջունիւ  
եւ օրհնութեամբ Լոնդոնի Էջմիածնի Փոնդի Կենտրոնական Յանձնաժողովին եւ  
ամէնքին, որոնց սոյն կարգադրութիւնը վերաբերում է, ծանուցանում է.

Կալկաթայի հանգուցեալ Յովհաննէս Գրիգորի Աբգարը թողել է որոշ գումար  
իւր կտակակատարներին՝ նոցա բացարձակ հայեցողութեան ներքոյ, որպիսի գու-  
մարը նոքա յանձնել են ինձ՝ Հայրապետական Կոնգակովս Լոնդոնում հաստա-  
տած Էջմիածնի Փոնդի Կենտրոնական Յանձնաժողովի Նախագահ եւ Գանձապահ  
Աւետում Պսակ Յակոբեանի եւ Ներսէս Կիւլպէնկեանի միջոցով՝ գործադրելու  
որոշած նպատակի համար, այն է՝ ամօքելու հայերի տառապանքը, որպէս յի-  
շատակուած է հանգուցեալ Յովհաննէս Գրիգորի Աբգարի կտակի մէջ: Ի նկատի  
ունենալով, որ ես ցանկանում եմ, ինչպէս եւ կտակակատարները, այդ գու-  
մարը յայտարարել Աւանդ եւ նշանակել Աւանդապահներ նպատակն իրագործե-  
լու համար՝ սորանով յայտնում եւ կարգադրում եմ հետեւեալը:—

1. Աւանդապահները պիտի լինեն իմ հաստատած Էջմիածնի Փոնդի  
Յանձնաժողովի անդամներից հինգ հոգի, որոնք ընտրուելու են նոյն Յանձնաժո-  
ղովի կողմից, նաեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Եւրոպայի Թեմում պաշտօ-  
նավարող հոգեւոր ներկայացուցիչը:

2. Աւանդապահները պէտք է ստանան յիշեալ գումարը, որպէս ինձ  
յանձնուած հանգուցեալ Յովհաննէս Գրիգորի Աբգարի կտակակատարներից, եւ  
եւ իրագործում եմ իմ հաւատարմատարներին՝ Աւետում Յակոբեանին եւ Ներ-  
սէս Կիւլպէնկեանին՝ յանձնել գումարը վերոյիշեալ Աւանդապահներին, որոնք  
պարտական են այդ գումարը տեղաւորել մի այնպիսի ապահով ձեւով, որ ար-  
տօնուում է Աւանդի վերաբերեալ Անդլիական օրէնքով՝ իրաւունք ունենալով,  
երբ օգտակէտ եւ նպատակայարմար երեւի՝ փոխելու զբամազլիս տեղաւորումը  
Էջմիածնի Կենտրոնական Յանձնաժողովի որոշմամբ եւ Ամենայն Հայոց Կաթո-  
ղիկոսի հաստատութեամբ:

3. Աւանդապահները իրաւունք ունին Աւանդ-Գրամազլիսի եկամուտը  
միայն գործադրելու որոշուած նպատակի համար, կատարելով բոլոր վճարում-  
ները եւ պատահական ծախքերը Լոնդոնի Էջմիածնի Փոնդի Կենտրոնական Յանձ-  
նաժողովի որոշումների համաձայն:

4. Ամենայն Հայոց Կաթողիկոսի անմիջական կարգադրութեան հիման  
վրայ, երբ այն տեղի կ'ունենայ, Աւանդապահները միշտ պարտաւոր են փո-  
խադրել Աւանդի եկամտից միայն՝ իրեն կամ իր ցուցմամբ այլուր, այնքան որ-  
քան կը պահանջէ, ամօքելու հայերի տառապանքները եւ թեթեւացնելու աղ-  
քատ ու չքաւոր հայերի կարիքները, նախապատուութիւն տալով, ՚ի դէպս հնա-  
բաւորութեան՝ այլիքներին եւ տասներկու տարեկանից վար եղող որբ տղանե-  
րին եւ տասն եւ հինգ տարեկանից վար եղող որբ աղջիկներին:

5. Աւանդապահները, որպէս զործադիր մարմին Էջմիածնի Կենտրոնական Յանձնաժողովի, ազատ են պատասխանատուութիւնից, երբ ղեկավարուում են նոյն Կենտրոնական Յանձնաժողովի օրինապէս ընդունուած որոշումներով:

6. Աւանդի վերաբերեալ ծագող մի որ եւ է հարցի մասին Աւանդապահներին անհամաձայնութեան դէպքում, հարցը լուծուում է Էջմիածնի Կենտրոնական Յանձնաժողովում ձայների մեծամասնութեամբ:

7. Ներկայ Աւանդապահների փոխարէն նորերը ընտրուում են Լոնդոնի Էջմիածնի Կենտրոնական Յանձնաժողովի կողմից եւ հաստատուում են Ամենայն Հայոց Կաթողիկոսի Կոնդակով:

Կենտրոնական Յանձնաժողովի անդամները նոյնպէս կարգուում եւ հաստատուում են, ինչպէս եւ մինչեւ այժմ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի Կոնդակով:

8. Աւանդի եկամտի զործադրութեան տարեկան նախահաշիւն ու հաշիւը կանոնաւորապէս ներկայացուում է Ամենայն Հայոց Կաթողիկոսին ՚ի հաստատութիւն:

9. Աւանդ-Իրամազուլը՝ հանգուցեալ Յովհաննէս Գրիգորի Աբգարի Կտակակատարների կողմից Ամենայն Հայոց Կաթողիկոսին յանձնուած որպէս մի գումար՝ ընդ միշտ պիտի մնայ Նորա բարձր հովանու ներքոյ եւ կարգադրութեան ենթակայ՝ սահմանուած նպատակին զործադրելու համար:

՚ի վաւերացումն որոյ ստորագրուում եւ կնքուում եմ, ՚ի 4-ն Յուլիսի հազար ինն հարիւր քսան եւ եօթն ամի:

Մայր Աթոռ Ս. Էջմիածին:

(Ստորագրութիւն) ՎՇՏԱԼԻ ԳԷՈՐԳ Ե ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԿ ԵՒ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

(ԿՆԻՔ ՌՈՒՍԵՐԷՆ)

(ԳԷՈՐԳ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ)

— 1912 —

Ամենայն Հայոց Ծայրագոյն Պատրիարք եւ Կաթողիկոսը ստորագրեց, կնքեց եւ յանձնեց ՚ի ներկայութեան ներքոյ ստորագրողներին:

Ս. Էջմիածնի Գերագոյն Հոգեւոր Խորհրդի Անդամներ

(ԿՆԻՔ)

ԳԵՐԱԳՐՈՅՆ ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ ՀԱՅՈՑ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

(Ստորագրութիւններ)

ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԱԳՐԱՏ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԷՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ԳԷՈՐԳ ՄԻՔԱՅԷԼ

(ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆ)

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԿ ԵՒ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Ֆոնդի Կենդրոնական Յանձնաժողովի Մեծարգոյ Անդամներին

Յանձնաժողովիդ անդամ յարգելի Գէորգ Միքայէլն անձամբ ներկայացրեց մեզ հանգուցեալ Յովհաննէս Գր. Աբգարի թողած գումարի մասին բարեյիշատակ հանգուցեալի եղբօր Մեծարգոյ Գրիգոր Աբգարի և Չեր խորհրդակցութեամբ կազմուած Աւանդի նախագիծը:

Գննութեան առնելով զայն և հաւանութիւն տալով զխաւոր սկզբունքներին, մտքինք որոշ փոփոխութիւններ, զորձի նպատակայարմարութեան և հանրային օգտաւէտութեան տեսակէտից, և Աւանդի և Աւանդապահների մասին արած կարգադրութիւնս ուղարկեցի Պ. Գէորգ Միքայէլի ձեռքով ի զործադրութիւն:

Լիայոյս եմ, որ զուք այդտեղ նեղութիւն կը կրէք թարգմանել տալ համաձայն կարգադրութեանս, միանգամայն հարազատ:

Մեր Հայրապետական Կոնդակով 1925 թուին հաստատուած էք որպէս անդամներ Էջմիածնի Կենդրոնական Յանձնաժողովի, որի նպատակն է հետզհետէ կազմել յանուն Ս. Էջմիածնի մայր գումար և ըստ կարեաց նպաստել Հայոց Հայրապետութեան և Մայր Աթոռին, զխաւորաբար Ս. Էջմիածնի հոգևոր բարձրագոյն դպրոցին, որի անհրաժեշտութիւնն Հայաստանեայց Եկեղեցւոյ համար քաջայայտ է ամենքին:


Այժմ ուղարկածս Աւանդադրով, Աւանդի և Աւանդապահների հաստատութեամբ, Էջմիածնի Կենդրոնական Յանձնաժողովը ստանում է աւելի լայն իրաւունքներ և պարտականութիւններ:

Ունենալով վստահութիւն Ձեզ վրայ, յոյս ունիմ նաև, որ երբեք չէք խնայի Ձեր նիւթական և բարոյական աջակցութիւնը և Ձեր ազգօգուտ զործունէութեամբ կը նպաստէք յիշեալ նպատակների յաջողութեանը:

Օրհնում եմ Ձեզ բոլորիդ և մաղթում եմ բարեբաստիկ կեանք, երջանկութիւն և յաջողութիւն Ձեր ամենայն բարի ձեռնարկութեանց մէջ:

(Ստոր.) ՎՇՏԱԼԻ ԳԷՈՐԳ Ե ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԿ ԵՒ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Թ. 596 5-ն Յուլիսի 1927 թ. Ս. Էջմիածին



Յամենայն սրտէ մերմէ օրհնեմք զձեզ և զնուիրատու ազգայինս, զհա-  
րազատ որդիս մեծի Աթոռոյս և մաղթեմք ի Տեառնէ պարզեւել ամենեցուն կար  
և զօրութիւն վասն ի կատար անելոյ յաշտութեամբ զազգային-կրօնական և  
զարբազան պարտիս առ Սուրբ Էջմիածին և առ Հայրապետութիւն հանուրց  
հայոց ի պայծառութիւն և ի փառս Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկե-  
ղեցոյս և յերջանկութիւն հաւատացեալ ժողովրդեան մերոյ սիրելոյ:  
Տէր Աստուած յաշտեացէ զբարի զործս ձեռաց ձերոց, ամէն:

(Ստորագրութիւն) ՎՇՏԱԼԻ ԳԷՈՐԳ Ե ԾԱՅՐԱԳՈՅՆ  
ՊԱՏՐԻԱՐԲ ԵՒ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ  
ՀԱՅՈՑ

ի 11=ն Յունիսի 1926 ամի,  
Ըստ Տումարիս ՌՅՀԵ.  
ի Հայրապետութեան Մերոյ ժԵ ամի.  
յԱրարեսեան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի.  
ի Վաղարշապատ.  
Թ. 448.

Կնքեմ.  
Անդամ Գերագոյն Հոգևոր Խորհրդոյ՝  
(Ստորագրութիւն) ԲԱԳՐԱՏ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

(ԿԱԹՈՒՂԻԿՈՍԱԿԱՆ ՆՇԱՆ)

**ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԲ  
ԵՒ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄ. ՀԱՅՈՑ**

ԳԷՈՐԳ Ե-ըդ Ծայրագոյն Պատրիարք եւ Կաթողիկոս Ամենայն Հայոց  
եւ Պետ Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցոյ Հայրապետական ողջունիւ  
եւ օրհնութեամբ Լոնդոնի Էջմիածնի Փոնդի Կենտրոնական Յանձնաժողովին եւ  
ամէնքին, որոնց սոյն կարգադրութիւնը վերաբերում է, ծանուցանում է.

Կալիաթայի հանգուցեալ Յովհաննէս Գրիգորի Աբգարը թողել է որոշ գումար  
իւր կտակակատարներին՝ նոցա բացարձակ հայեցողութեան ներքոյ, որպիսի գու-  
մարը նոքա յանձնել են ինձ՝ Հայրապետական Կոնդակովս Լոնդոնում հաստա-  
տած Էջմիածնի Փոնդի Կենտրոնական Յանձնաժողովի Նախագահ եւ Գանձապահ  
Աւետում Պսակ Յակոբեանի եւ Ներսէս Կիւլպէնկեանի միջոցով՝ զործադրելու  
որոշած նպատակի համար, այն է՝ ամօքելու հայերի տառապանքը, որպէս յի-  
շատակուած է հանգուցեալ Յովհաննէս Գրիգորի Աբգարի կտակի մէջ: Ի նկատի  
ունենալով, որ ես ցանկանում եմ, ինչպէս եւ կտակակատարները, այդ գու-  
մարը յայտարարել Աւանդ եւ նշանակել Աւանդապահներ նպատակն իրագործե-  
լու համար՝ սորանով յայտնում եւ կարգադրում եմ հետեւեալը:—

1. Աւանդապահները պիտի լինեն իմ հաստատած Էջմիածնի Փոնդի  
Յանձնաժողովի անդամները հինգ հոգի, որոնք ընտրուելու են նոյն Յանձնաժո-  
ղովի կողմից, նաեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Եւրոպայի Թեմում պաշտօ-  
նավարող հոգեւոր ներկայացուցիչը:

2. Աւանդապահները պէտք է ստանան յիշեալ գումարը, որպէս ինձ  
յանձնուած հանգուցեալ Յովհաննէս Գրիգորի Աբգարի կտակակատարներից, եւ  
եւ լիազօրում եմ իմ հաւատարմատարներին՝ Աւետում Յակոբեանին եւ Ներ-  
սէս Կիւլպէնկեանին՝ յանձնել գումարը վերոյիշեալ Աւանդապահներին, որոնք  
պարտական են այդ գումարը տեղաւորել մի այնպիսի ապահով ձեւով, որ ար-  
տօնուում է Աւանդի վերաբերեալ Անգլիական օրէնքով՝ իրաւունք ունենալով,  
երբ օգտաւէտ եւ նպատակայարմար երեւի՝ փոխելու գրամազլխի տեղաւորումը  
Էջմիածնի Կենտրոնական Յանձնաժողովի որոշմամբ եւ Ամենայն Հայոց Կաթո-  
ղիկոսի հաստատութեամբ:

3. Աւանդապահները իրաւունք ունին Աւանդ-Գրամազլխի եկամուտը  
միայն զործադրելու որոշուած նպատակի համար, կատարելով բոլոր վճարում-  
ները եւ պատահական ծախքերը Լոնդոնի Էջմիածնի Փոնդի Կենտրոնական Յանձ-  
նաժողովի որոշումների համաձայն:

4. Ամենայն Հայոց Կաթողիկոսի անմիջական կարգադրութեան հիման  
վրայ, երբ այն տեղի կ'ունենայ, Աւանդապահները միշտ պարտաւոր են փո-  
խադրել Աւանդի եկամտից միայն՝ իրեն կամ իր ցուցմամբ այլուր, այնքան որ-  
քան կը պահանջէ, ամօքելու հայերի տառապանքները եւ թեթեւացնելու աղ-  
քատ ու չքաւոր հայերի կարիքները, նախապատուութիւն տալով, ՚ի դէպս հնա-  
րաւորութեան՝ այրիներին եւ տաններին տարեկանից վար եղող որբ տղանե-  
րին եւ տասն եւ հինգ տարեկանից վար եղող որբ աղջիկներին:

**Գ Է Ո Ր Գ Ե**  
**Ե Պ Ի Ս Կ Ո Պ Ո Ս Ա Պ Ե Տ**  
**Ե Ի Կ Ա Ք Ո Ղ Ի Կ Ո Ս**  
**Ա Մ. Ն Ա Յ Ո Ց**  
**Ռ Ե Կ Ա. = 1912**

**Գ Է Ո Ր Գ Ե Ծ Ա Ռ Ա Յ Յ Ի Ս Ո Ւ Ս Ի Ք Ի Ի Ս Տ Ո Ւ Ե Ի Ա Ն Հ Ա Ս Ա Ն Ե Լ Ի Կ Ա Մ Օ Ք Ն Ա Ս Տ Ո Ի Ծ Ո Ց Ե Պ Ի Ս Կ Ո Պ Ո Ս Ա Պ Ե Տ Ե Ի Կ Ա Ք Ո Ւ Գ Ի Կ Ո Ս Ա Մ Ե Ն Ա Յ Ն Հ Ա Յ Ո Ց Ծ Ա Ց Ի Ս Գ Ո Ց Ն Պ Ա Տ Ի Ա Ր Ք Հ Ա Մ Ա Չ Գ Ա Կ Ա Ն Ն Ա Խ Ա Մ Ե Ծ Ա Ր Ա Ք Ո Ռ Ո Ց Ա Ր Ա Ր Ա Տ Ե Ա Ն Ա Ռ Ա Ք Ե Լ Ա Կ Ա Ն Մ Ա Յ Ր Ե Կ Ե Գ Ե Ց Ի Ո Ց Ս Ի Բ Ո Ց Կ Ա Ք Ո Ւ Գ Ի Կ Ե Է Չ Մ Ի Ա Ծ Ն Ի :**

Պատուարժան Անդամոց Կենտրոնական Յանձնաժողովոյ Ս. Էջմիածնի, որ 'ի Լոնդոն, Պ. Պ. Յարութիւնի Աբգար, Մկրտչի Կիւմիւշճեան, Կարապետի Տիլպէր, Յակոբայ Շահինեան, Սեդրակայ Իզմիտեան, Գէորգայ Գրիգորեան և Ստեփաննոսի Տէր-Մեսրոպ Գրիգորեան, հարազատ որդւոց Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի և սիրելի զաւակաց մերոց ողջոյն և օրհնութիւն Հայրապետական :

Ի 11-ն Յունիսի 1926 ամի Մեք տուաք կազմել Կենտրոնական Յանձնաժողով Ս. Էջմիածնի ի Լոնդոն, նպատակ որոյ է ընձեռել հանդանակութեամբ զուժար յանուն Ս. Էջմիածնի և կազմել յատուկ դրամազուլիս առ ի լցուցանել զկարիս բազմազանս մեծի տանս Ս. Էջմիածնի և Վեհարանի Հայրապետութեան Ամենայն Հայոց, որք զարդիս չ'ունին զայլ աղբիւր կեցութեան, բայց եթէ կամաւոր նուիրաբերութիւնս հաւատացեալ ժողովրդեան : Սակայն ի նկատ առեալ Մեր զի գործ Յանձնաժողովոյն բարդանայ զործառնութեամբ նուիրադրամոց աւանդելոց ի բարեյիշատակ Յովհաննու Աբգար, բարւոք վարկաք զթիւ անդամոց Կենտրոնական Յանձնաժողովոյ Ս. Էջմիածնի բազմացուցանել, առ այս տուաք հրահանգ լիազօր ներկայացուցչի Մերում և Պատուիրակի Մայր Աթոռոյս Գերաշնորհ Տ. ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ առաջի առնել Մեզ զանուանս ակնաւոր անձանց առ ի կոչել զնոսս յայդ պաշտօն : Չարդիս ի յայտարար զրութենէ Տ. ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ, որ ի 12-ն Սեպտեմբերի տարւոյս իրազեկ եղաք, եթէ Դուք, պատուական զաւակունք Մեր սիրայօժար յանձն առեալ էք ընկալնուլ կոչումն անդամութեան Կենտրոնական Յանձնաժողովոյ Ս. Էջմիածնի, որ ի Լոնդոն, և զործել յօգուտ համազգական նախամեծար Աթոռոյս . այսու Հայրապետական Կոնդակաւս հաստատեմք զձեզ ի պաշտաման անդամութեան Կենտրոնական Յանձնաժողովոյ Ս. Էջմիածնի և հրաւիրեմք զձեզ զործակցել ընդ նախագահի նորին և այլ անդամոց հաստատելոց ի Մէնջ ի 11-ն Յունիսի 1926 ամի :

Լիայոյս եմք, եթէ ձերով աշարջութեամբ, շանասիրութեամբ և եռանդեամբ ի զուլիս հանիցէք զնպատակ Յանձնաժողովոյն և ըստ ամենայնի զուն զործիցէք ի զանձել զդրամազուլիս բաւարար առ ի յապահովութիւն Մայր Աթոռոյ և ի զարգացումն կրթական և այլ բարենպատակ ձեռնարկութեանց նորին :





Նորին Սուրբ Օծութիւն Տ. Տ. Գեորգ Ե-րդ  
Ծայրագոյն Պատրիարք  
եւ Կաթողիկոս Ամենայն Հայոց

Առ

Միդլանդ Բանկ՝

Կտակակատար եւ Աւանդապահ Ընկ. - Լիմիթեդ

Օրհնեմք զձեզ ամենեսին, զհարազատ որդիս Մեծի Աթոռոյս և մաղթեմք ի Տեառնէ պարգևել ձեզ կար և զօրութիւն վասն ի կատար ածելոյ զսրբազան պարտիս ձեր առ Միածնաէջ Ս. Տաճարն և առ Հայրապետութիւնն հանուրց Հայոց ի պայծառութիւն և ի վառս Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ: Տէր յաշողեսցէ զգործս բարիս ձեռաց ձերոց, ամէն:

Ողջ լերուք, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն և օրհնեալ ի Մէնջ, Ամէն:

(Ստորագրութիւն) ՎՆՏԱԼԻ ԳԷՈՐԳ Ե ԿԱԹՈՒՂԻԿՈՍ  
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ

յ30-ն Նոյեմբերի 1929 ամի  
Ըստ Տումարիս ՌՅՁ  
ի Հայրապետութեան Մերոյ ԺԹ ամի  
յԱրարսեան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի  
ի Վաղարշապատ  
Թ. 1036

ԱՐԳԱՐԵԱՆ ԱՌԱՆՊԱԳԻՐ

Գրու՞մ  
70 Անգլ. Ոսկու  
21 Նոյմ. 1927

Գրու՞մ  
70 Անգլ. Ոսկու  
21 Նոյմ. 1927

Գրու՞մ  
50 Անգլ. Ոսկու  
21 Նոյմ. 1927

Ըստ օրինի  
Գրու՞մում լինելը  
հաստատու՞մ է  
21 Նոյմ. 1927

**ՍՈՑԵՆ ԱՌԱՆՊԱԳԻՐԸ** կայացաւ հազար ինն հարիւր քսան եօթը բաւի  
Հոկտեմբերի սասն երեքին՝ հետեւեալ երեք կողմերի միջեւ. ա) ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ  
ՕԾՈՒԹԻՒՆ Տ. Տ. ԳԷՈՐԳ Ե-րդ՝ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԲ ԵՒ ԿԱԹՈՂԻ-  
ԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԵՒ ՊԵՏ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ  
ԵԿԵՂԵՑԻՈՅ (որ յես այսու պիտի կոչուի «Նորին Սուրբ Օծուքին Աւանդն  
հաստատող»)։ Բ) ՄԻԿԱՆԻ ԲԱՆԿ՝ ԿՏԱԿԱԿԱՏԱՐ ԵՒ ԱՌԱՆԴԱՊԱՀ ԸՆ-  
ԿԵՐՈՒԹԻՒՆ-ԼԻՄԻԹԷԴ (որ յես այսու պիտի կոչուի «Պահապան Աւանդա-  
պան»), որի հասցէն է 5 Princess Street, Լոնդոն քաղաքում։ Եւ Ճ) ՆՈ-  
ՐԻՆ ԳԵՐԱՊԱՏԻՈՒԹԻՒՆ ՊԱԼԱՔԵԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԵՒ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՀԻՄ-  
ՆԱԴՐԱՄԻ ԼՈՆԴՈՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ հետեւեալ վեց  
անդամները. այսինքն՝ ԱԻԵՏՈՒՄ ՊՍՍԿ ՅԱԿՈԲԵԱՆ, ԳԷՈՐԴ ՄԻՔԱՅԷԼ,  
ՆԵՐՍԷՍ ԿԻԼՊԷՆԿԵԱՆ, ՍԱՐԳԻՍ ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵԴԳԱՐ, ԱՆԻՔՏՈՍ ՈՒՆ-  
ՃԵԱՆ ԵՒ ՅԱԿՈԲՈՍ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԱԼՔՈԼՄ (որք յես այսու պիտի կոչուին  
«Առաջին Գործադիր Աւանդապաններ»)։

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼՈՎ, որ Կալկաթա քաղաքի բնակիչ հանգուցեալ Յով-  
հաննէս Գրիգոր Արքար իր վերջին կտակում իր կտակակատարներին բողի է  
յիսուն ութ հազար հինգ հարիւր երեք ոսկի վեց շիլին Եւ սասը պէննու մի  
գումար (£ 58503. 6. 10) բռտառ հայերի ստապաններն ամոխելու, նա-  
խապատարին սալով այրիներին Եւ որբերին.

ԵՒ ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼՈՎ, որ վերոյիշեալ կտակակատարներն այդ գու-  
մարը յանձնել են Նորին Սուրբ Օծուքին Աւանդն Հաստատողին՝ հանգուցեալի  
որոշած նպատակին գործածելու համար.

ԵՒ ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼՈՎ, որ Նորին Սուրբ Օծուքին Աւանդն Հաս-  
տատողը իր հազար ինն հարիւր քսան եօթ յուլիս չորս բուսկիր Հայրապետա-  
կան Կոնդակով (որի նոտարական մի բարգմանութիւնը կցուել է սոյն Աւան-  
դակին) իբրեւ Գործադիր Աւանդապաններ նշանակել Եւ հաստատել է Ս.  
Էջմիածնի Հիմնադրամի Լոնդոնի Կենտրոնական Յանձնաժողովի առ նուազն  
հինգ անդամները. ՚ի պատճառով նշանակեալ մի այլ անդամով, որի յիշա-  
տակութիւնն պիտի լինի ստորեւ.

ԵՒ ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼՈՎ, որ Նորին Սուրբ Օծուքին Աւանդն Հաս-  
տատողը վերոյիշեալ կտակի կտակակատարների հաւանութեամբ փափաքել է,  
որ այս գումարը մի Աւանդադրամի վերածուի Եւ այդ կերպով հանգուցեալ  
կտակարարի նպատակը գործադրուի, ուստի ինչպէս որ պիտի յիշուի քիչ  
կտակարարի նպատակը գործադրուի, ուստի ինչպէս որ պիտի յիշուի քիչ  
վերջ, այդ £ 58503. 6. 10 գումարը արտօնել է յանձնել Պահապան Աւան-  
դապանին (որ անգլիական օրինաց համաձայն կազմուած Աւանդապանների  
մի ընկերութիւն է Եւ օրէնքով լիազօրուած է նման Աւանդապանի դերն  
ստանձնելու). որպէսզի սոյն յիսուն ութ հազար հինգ հարիւր երեք ոսկի վեց  
շիլին Եւ սասը պէննու գումարը Պահապան Աւանդապանի մօտ պահուի իբ-  
րեւ Աւանդադրամ յետագայ պայմաններով.

ԵՒ ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼՈՎ, որ Նորին Սուրբ Օծուքիւն Աւանդն Հաս-  
սասողը ըստ օրինի արտօնել է իւր հաւասարմասարներ Աւետում Պսակ Յակոբ-  
եանին եւ Ներսէս Կիլիկեցիներին յիշեալ գումարը փոխանցել Առաջին Գոր-  
ծադիր Աւանդապահներին շահարկութեան մէջ դնելու համար.

ԵՒ ՎԵՐՋԱՊԷՍ ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼՈՎ, որ Առաջին Գործադիր Աւան-  
դապահները այդ գումարը փոխանցել են Պահապան Աւանդապահին.

ԱՅԺՄ ՍՈՅՆ Ա.Ի.Ս.ՆԴԱԳԻՐՆ ՎԿԱՅՈՒՄ Է, թէ

Պահապան Աւանդապահն այսու ընդունում եւ յայտարարում է, որ ինք  
յիշեալ յիսուն ութ հազար հինգ հարիւր երեք ոսկի վեց շիլին եւ տասը պէննու  
գումարը (£ 58503. 6. 10) ստացել է Պահապան Աւանդապահի հանգաման-  
քով իբրեւ Աւանդադրամ եւ պիտի շահարկէ այդ գումարը Աւանդադրամների  
շահարկումի մասին օրէնքի սահմանած եղանակով ինչպէս որ ստորեւ պիտի  
նշանակուի, եւ շահարկութեան բաժնեբաժնեբերը իր մօտ պիտի պահէ իբրեւ  
Աւանդ հետեւեալ պայմաններով :

ԵՒ ԱՅԺՄ ՓՈՆԱԴԱՐՉ ՀԱՄԱՉՈՅՆՈՒԹԵԱՄԲ ՅԱՅՏԱՐԱՐԻՈՒՄ Է, որ

1. ՊԱՀԱՊԱՆ Ա.Ի.Ս.ՆԴԱԳԱՀԸ պիտի գործէ 1906 թուի Աւանդապահ-  
ների Ընդհանուր Օրէնքի 4-րդ Մասի 2-րդ Գլխի համաձայն իբրեւ Պահապան  
Աւանդապահ, իսկ Աւանդադրամի եկամուտը պիտի յանձնուի Գործադիր  
Աւանդապահներին եւ պիտի գործադրուի նրանց միջոցով :

2. ԱՅՏԵՂ գործածուած «Գործադիր Աւանդապահներ» խօսքը վերաբերում է Առա-  
ջին Աւանդապահներին եւ նրանց օրինակման յաջորդներին: Գործադիր Աւանդապահները  
միշտ պիտի լինին Ս. Էջմիածնի Հիմնադրամի Լոնդոնի Կենտրոնական Ցանձնատնօղովի ան-  
դամներից եւ պիտի բաղկանան առ նուազն հինգ հոգուց, որոնց ի պաշտօնէ պիտի անդա-  
մակցի նաեւ Եւրոպայի թեմում ժամանակի Ամենայն Հայոց Կարողիկոսը ներկայացնող  
Հայ Եպիսկոպոսը :

3. ՊԱՀԱՊԱՆ Ա.Ի.Ս.ՆԴԱԳԱՀԸ յիշեալ գումարը պիտի շահարկէ հարիւ-  
րին երկու ու կէս տոկոսաբեր Պեսական Գոնտարիդէթէր կոչուած պարտաբերու-  
թեան վրայ. բայց Գործադիր Աւանդապահները նախօրօք ստանալով ժամա-  
նակի Ամենայն Հայոց Կարողիկոսի հաւանութիւնը, կարող են պարբերա-  
բար հրահանգներ սալ այդ գումարը շահարկել կրկին նոյն եւ կամ տարբեր  
բաժնեբաժնեբերու վրայ՝ Աւանդադրամների շահարկման մասին գոյութիւն  
ունեցող Անգլիական Օրէնքի սրամադրութեանց համաձայն. եւ այս դէպ-  
քում Պահապան Աւանդապահը պիտի ենթադրէ, որ Գործադիր Աւանդա-  
պահների կողմից սրուած հրահանգները նախօրօք արժանացել են Նորին  
Սուրբ Օծուքիւն ժամանակի Ամենայն Հայոց Կարողիկոսի հաւանութեան :

4. Ա.Ի.Ս.ՆԴԱԳԱՀԸ վերաբերեալ բոլոր դրամների, տոկոսաբեր թուղ-  
թերի եւ վաւերաբուրքերի պահպանութեան իրաւունքը բացառապէս վերա-  
պահուած է Պահապան Աւանդապահին. բայց Գործադիր Աւանդապահ-

ները ամէն դիւրութիւն պիտի ունենան ժամանակ առ ժամանակ ֆինելու եւ  
ստուգելու նոյնը եւ կամ նոյնի վերաբերեալ ուեւէ հաշիւ, տեղեկագիր կամ  
վաւերաբուրք :

5. Ա.Ի.Ս.ՆԴԱԳԱՀԸ պահպանող բոլոր տեսակի արժեթուղթերի դիմաց  
Տէրերի Պեսական Մատենում միայն Պահապան Աւանդապահի անունը պիտի  
երեւայ, եւ ամէն միջոց ձեռք պիտի առնուի, որպէսզի դրանց բոլոր տոկոս-  
ներն ու շահարկութիւնները վճարուին Պահապան Աւանդապահին :

6. ՊԱՀԱՊԱՆ Ա.Ի.Ս.ՆԴԱԳԱՀԸ կարող է գործել իր պաշտօնեայ կամ  
պաշտօնեաների միջոցով, որոնք իրենց հետքին կարող են վարձել փաստաբան  
կամ սեղանաւորական միջնորդ եւ կամ ուրիշ գործակալներ սոյն Աւանդի  
վերաբերեալ ուեւէ կամ բոլոր գործառնութիւնները կատարելու, մէջը լինե-  
լով նաեւ դրամ ստանալու եւ վճարելու գործողութիւնը :

7. ՊԱՀԱՊԱՆ Ա.Ի.Ս.ՆԴԱԳԱՀԸ իրաւունք պիտի ունենայ շահարկութեան  
դնելուց առաջ մայր գումարից զեղջելու իր վարձը՝ Պահապան Աւանդա-  
պահների վարձատրութեան սակի համաձայն, ինչ որ էր սոյն Աւանդագրի  
կայացած օրը. նոյնպէս բաւարար մի գումար օրինական եւ ընդհանուր  
ծախսերի եւ դրոշմաբուրքերի համար : Գարձեալ Պահապան Աւանդապահը  
իրաւունք պիտի ունենայ Աւանդադրամի եկամուտից զեղջելու իր եկամտային  
վարձը, որ այժմեայ սակով հարիւրին տասն հինգ շիլին (3/4 ոսկի) է :

8. ՊԱՀԱՊԱՆ Ա.Ի.Ս.ՆԴԱԳԱՀԸ Աւանդադրամից գոյացած բոլոր եկամուտը՝ շահ, տո-  
կոս, Եւայն՝ ստորեւ յիշուած եղանակով պիտի յանձնէ Գործադիր Աւանդապահներին, ու-  
րոնց տուած սացագիրը բաւարար պիտի լինի ազատ կացուցանելու նրան ո՛ր եւ է պատաս-  
խանաւորութիւնից յիշեալ գումարի համար. այնպէս որ բնաւ պարտաւոր չպիտի լինի հե-  
տեւելու կամ տեսնելու, թէ արդեօք Գործադիր Աւանդապահները այդ գումարը իր նպա-  
տակին գործադրու՞մ են թէ ոչ: Իսկ Գործադիր Աւանդապահները իրենց Աւանդապահու-  
թեան պաշտօնը կատարելիս կարող են Ֆոնդի եկամուտը գործադրել իրենց բացարձակ դա-  
տարեւորութեամբ եւ առանց ո՛րեւէ մի պատասխանատւութեան այնպէս ինչպէս որ իրենք յա-  
տարեւորութեան կը նկատեն նպաստակալների շահի տեսակէտից եւ այս բանը կատարելիս կարող  
են նկատել առնել ուեւէ հրահանգ կամ խնդրք, որ կը կատարուի նամակով կամ ցամա-  
խային եւ ձովային հետագրով :

9. ԳՈՐԾԱԳԻՐ Ա.Ի.Ս.ՆԴԱԳԱՀԸՆԵՐԸ իրենց միջից մէկին պիտի նշանա-  
կեն Ա.սենապետ, մէկին Պատուակալ Գանձապետ եւ մի ուրիշին Պատուակալ  
Ա.սենապետ. եւ այս երեքի միացեալ ստորագրութիւնը, կամ նրանցից եր-  
կուսի եւ մի երրորդ Գործադիր Աւանդապահի ստորագրութիւնը բաւական  
պիտի լինի, որ Պահապան Աւանդապահը նրանց յանձնէ Գործադիր Աւան-  
դապահներին հասանելիք ամբողջ եկամուտը, այն պայմանով, որ ամէն  
դէպքում Պատուակալ Գանձապահի ստորագրութիւնն անհրաժեշտ է :

10. ԳՈՐԾԱԳԻՐ Ա.Ի.Ս.ՆԴԱԳԱՀԸՆԵՐԸ իրաւասու են Ֆոնդի եկամուտից  
զեղջելու Աւանդի գործադրութեան առթիւ իրենց կատարած եւ ապագային  
պարբերաբար կատարելիք բոլոր ծախսերը, բայց ո՛չ մի Գործադիր Աւան-  
դապահ իր անհատական ծառայութեան համար ուեւէ վարձ կամ վճարում  
չպիտի ստանայ :

11. ՊԱՀԱՊԱՆ ԱԻԱՆԴԱՊԱՀՆ ու Գործադիր Աւանդապահները՝ բացի իրենց վրասահուած եւ յանձնուած մի շարք վեժիւները կայացնելու պարագաներից՝ բնաւ պարտաւոր չպիտի լինին անձամբ գործելու, այլ պիտի կարողանան Աւանդի հաշուին նշանակել ո եւ է պրոֆեսիոնալ կամ առեւտրական անձ կամ ուրիշ գործակալ Աւանդի վերաբերեալ գործերը կատարելու. այսինքն՝ դրամ եւ այլ արժեքուղբեր ընդունելու, վճարելու, յանձնելու եւ կամ ո եւ է այլ գործ կատարելու: Եւ եթէ այսպէս փոխանակ անձամբ մի ուրիշ գործակալի միջոցով գործելու հետեւանօք ո եւ է կորուստ պատահի իրանք պատասխանատու չպիտի բռնուին:

12. Եթէ Նորին Սուրբ Օծուքիւն Աւանդն Հաստատողը կամ նորա յաջորդ այն ժամանակի Ամենայն Հայոց Կաթողիկոսը աշխարհի ո եւ է մի մասում հայերի տառապանքները ամօքելու նպատակով ո եւ է մի գումար պահանջէ եւ եթէ այդ գումարը կամ նրա ո եւ է մի մասը այս Աւանդագրամի եկամուտից վճարել հնարաւոր լինի, այն ժամանակ Գործադիր Աւանդապահները այդ գումարը պիտի փոխադրեն Կաթողիկոսին կամ նոյնը ընդունելու համար Նորին Սուրբ Օծուքեան նշանակած ո եւ է մի անձին: Բայց Գործադիր Աւանդապահները հնարաւոր եղածին չափ նախապատուութիւն պիտի տան այսինքնին եւ տասներկու տարեկանից վար եղող որք մանչերին եւ տասներկու տարեկանից վար եղող որք աղջիկներին:

13. Եթէ երբ եւ իցէ Գործադիր Աւանդապահների միջեւ անհամաձայնութիւն կամ գաղափարի տարբերութիւն յառաջ գայ, տուած ձայների համաձայն մեծամասնութեան գաղափարը պիտի գերիշխէ:

14. ԳՈՐԾԱԴԻՐ ԱԻԱՆԴԱՊԱՀՆԵՐԸ պարտին թէ՛ Մայր Գումարի եւ թէ՛ տարեկան եւ կամուտի բոլոր հաշիւներն ու նախահաշիւները ներկայացնել Նորին Սուրբ Օծուքեան առ ի հաստատութիւն. նոյնպէս ցոյց տալ մի հաշուեկշիւի վրայ տարեկան եկամուտի ինչպէս ծախսուած լինելը:

15. Եթէ հրաժարուածի, մահուայ եւ այլ պատճառով Գործադիր Աւանդապահների թիւը մեկ կամ անելի պակաս ունենայ, մնացեալ Աւանդապահները կը նշանակեն նոր անդամ կամ անդամները եւ կը ներկայացնեն Նորին Սուրբ Օծուքիւն Աւանդն Հաստատողին եւ կամ նորա այն ժամանակուայ յաջորդին առ ի հաստատութիւն, որ պէտք է լինի յատկ չայրապետական Կոնդակով:

16. Եթէ երբեք պատահի, որ բոլոր Գործադիր Աւանդապահները հրաժարին կամ մեռնեն գործել, այն ժամանակ Ֆոնդից գոյացած եկամուտը վերոյիշեալ Կտակի նպատակին համար գործադրելու պայմանով կը վճարուի նրան, որին որ Նորին Սուրբ Օծուքիւն Աւանդն Հաստատողը կամ նորա այն ժամանակուայ յաջորդը կը նշանակէ գրաւոր կերպով:

17. Եթէ ո եւ է մի տարի Գործադիր Աւանդապահների կարծիքով եկամուտի ո եւ է մի մասը կարիք չի լինիր իր նպատակին գործադրել, եւ եթէ Գործադիր Աւանդապահները հրահանգեն, այն ասեւն եկամուտի այդ մասը Մայր Գումարի եղանակով շահարկութեան մէջ կը դրուի եւ այդպիսով Մայր Գումարի մասը կը կազմէ:

18. ԳՈՐԾԱԴԻՐ ԱԻԱՆԴԱՊԱՀՆԵՐԸ առ նուազն չորս ամիսը մեկ անգամ նիստ պիտի գումարեն այս Աւանդի վերաբերեալ գործերը կարգադրելու. իսկ եթէ երբեք անհրաժեշտ Գործադիր Աւանդապահներից ո եւ է չորսի ներկայութիւնը բաւարար պիտի լինի ժողովը օրինաւոր համարելու:

19. ՀԱՆԳՈՒՅՑՆԱԼ Յովհաննէս Գրիգոր Աբգարի կտակապահների կողմից Ամենայն Հայոց Կաթողիկոսին յանձնուած եւ իբրեւ աւանդ պահուող սոյն Իրամազուիսը ընդ միշտ պիտի մնայ Նորին Վեհափառութեան բարձր հովանու տակ եւ ներակայ պիտի լինի նորա հսկողութեան իր սահմանեալ նպատակին գործածելու համար:

20. ՍՈՅՆ Աւանդագիրն պիտի գործադրութեան մէջ մտնէ եւ պարտաւոր դառնայ բոլոր կողմերի համար երբ Գործադիր Աւանդապահներից առ նուազն հինգի եւ Պահապան Աւանդապահի ստորագրութիւնները կրէ եւ նրանց կնիքով վաւերացուի:

Ի վկայութիւն վերոյգրեալի, առաջին ու երկրորդ կողմերն իրենց ստորագրութիւնն ու կնիքը դրել են այստեղ. իսկ Միղլանդ Բանկ՝ Կտակապահար եւ Աւանդապահ Ընկերութիւն-Լիմիթեդ իր օրինական կնիքով կնքել է վերեւ նշանակուած քուականին:

ՄԻԿԱՅԻԼ ԲԱՆԿԻ՝ ԿՏԱԿԱՊԱՀՆԱՐ ԵՒ ԱԻԱՆԴԱՊԱՀ ԸՆԿ. ԼԻՄԻԹԷԴԻՒՍ օրինական կնիքն այստեղ դրուեց ի ներկայութեան հետեւեալներէ՝



ԶԱՐԼՍ ԳՈՒԻ } Յիշեալ Ընկերութեան  
Ե. Ր. ՏՈՒՐՏՈՆ } Երկու Տեսուչներ  
Մ. Մ. ՈՒԱՅԼԳ } Վարիչ

Ստորագրուեց, կնքուեց եւ յանձնուեց յիշեալ ԱԻԵՏՈՒՄ ՊՍՍԿ ՅԱԿՈՒԲԵԱՆԻ կողմից ի ներկայութեան՝ ԳԵՐՈՎԲԷ ԿԻԻԼՊԷՆԿԵԱՆԻ

Ստորագրութիւն եւ Կնիք Ա. Պ. ՅԱԿՈՒԲԵԱՆ

Ստորագրուեց, կնքուեց եւ յանձնուեց յիշեալ ԳԻՈՐԳ ՄԻՔԱՅԷԼԻԻ կողմից ի ներկայութեան՝ ՀԷՆՐԻ ԶՈՐԶ ԷՈՒԻՆԿԻ

Ստորագրութիւն եւ Կնիք ԳԷՈ. ՄԻՔԱՅԷԼ

Ստորագրուեց, կնքուեց եւ յանձնուեց յիշեալ ՆԵՐՍԷՍ ԿԻԻԼՊԷՆԿԵԱՆԻ կողմից ի ներկայութեան՝ ԶԱՐԼՍ ՄՍՅՔԻԼ ՀՈԼԹԻ

Ստորագրութիւն եւ Կնիք Ն. ԿԻԻԼՊԷՆԿԵԱՆ

Ստորագրուեց, կնքուեց եւ յանձնուեց յիշեալ ՍԱՐԳԻՍ ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵԴԳԱՐԻ կողմից ի ներկայութեան՝ ՀԷՆՐԻ ԶՈՐԶ ԷՈՒԻՆԿԻ

Ստորագրութիւն եւ Կնիք Ս. Յ. ԵԴԳԱՐ

Ստորագրուեց, կնքուեց և յանձնուեց յիշեալ  
ԱՆԻՔՏՈՍ ՈՒՆՃԵԱՆԻ կողմից  
ի ներկայութեան՝  
ՔԵՐՈՎԲԷ ԿԻԻԼՊԷՆԿԵԱՆԻ

Ստորագրութիւն և կնիք  
ԱՆԻՔՏՈՍ ՈՒՆՃԵԱՆ

Ստորագրուեց, կնքուեց և յանձնուեց յիշեալ  
ՅԱԿՈԲՈՍ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԱԼՔՈՂՄԻ կողմից  
ի ներկայութեան՝  
Ե. ՖԵՌԻԷՐԶԵՐԴ-Ի

Ստորագրութիւն և կնիք  
ՋԷՄՍ Ա. ՄԱԼՔՈՂՄ

Նորին Սուրբ Օծուքիւն Տ. Տ. Գէորգ Ե-րդ  
Ծայրագոյն Պատրիարք  
եւ Կաթողիկոս Ամենայն Հայոց

Ա.Ն

Միդլանդ Բանկ՝  
Կտակակատար եւ Աւանդապահ Ընկ. - Լիմիթեդ

Ա.Ք.Գ.Ա.ՐԵԱՆ

ՅԱՐԵՂՈՒԾՄԱԿԱՆ ԱԻԱՆԳԱԳԻՐ

(ՊԱՏՐԱՍԵԱԼ ԶԵՌԱՄԲ՝ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ)

(Messrs.) SPEECHLY, MUMFORD & CRAIG,  
10, New Square,  
Lincoln's Inn, W. C. 2.



Գրուել  
1/2 Ոսկու

**ՍՈՅՆ ՅԱՒԵԼՈՒՈՒԾԱԿԱՆ ԱՒԱՆԳՈՒԳԻՐԸ** կայացաւ հազար ինն հարիւր երեսուն բուի Փետրուարի հինգին, հետեւեալ երեք կողմերի միջեւ.

ա) Նորին Սոսրբ Օծուքիին Տ. Տ. ԳԷՈՐԳ Ե-րդ՝ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏ-ՐԻԱՐԲ ԵՒ ԿՍԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԵՒ ՊԵՏ ՀԱՅՍԱՍԱՆԵՍԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՅ (որ յես այսու պիտի կոչուի «Նորին Սուրբ Օծուքիին Աւանդն Հասասող»): Բ) ՄԻԴԼԱՆԴ ԲԱՆԿ՝ ԿՏԱԿԱԿԱՍԱՐ ԵՒ ԱՒԱՆԳՈՒՊԱՀ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ-ԼԻՄԻԹԷԴ (որ յես այսու պիտի կոչուի «Պահապան Աւանդապան»): որի հասցէն է 5, Princess Street, Լոնդոն Բարաբոնա. Եւ Դ) ՆՈՐԻՆ ԳԵՐՍՊԱՏՈՒՈՒԹԻՒՆ Տ. ԹՈՐԳՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՒՊՈՍ ԳՈՒՇԱԿԵՍՆ՝ ԱՌԱՋՆՈՐԴ ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՅՈՑ, Եւ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՀԻՄՆԱԳՐԱՄԻ ԼՈՆԴՈՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՅԱՆՉՆԱԺՈՂՈՎԻ հետեւեալ հինգ անդամները. այսինքն՝ ԱԻԵՏՈՒՄ ՊՍՍԿ ՅԱԿՈԲԵԱՆ, ԳԷՈՐԳ ՄԻՔԱՅԷԼ, ՆԵՐՍԷՍ ԿԻԼՊԷՆԿԵԱՆ, ԱՆԻՔՏՈՍ ՈՒՆՃԵԱՆ Եւ ՅԱԿՈԲՈՍ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԱԼՔՈԼՄ (որ յես այսու պիտի կոչուին «Գործադիր Աւանդապաններ»):

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼՈՎ, որ այն Աւանդագիրը յաւելուածական մասը պիտի կազմէ հազար ինն հարիւր քսան եօթ բուի Հոկտեմբերի քսաներեքին՝ ա) Նորին Սուրբ Օծուքիին Աւանդն Հասասողի. Բ) Պահապան Աւանդապանի. Եւ Դ) Գերապասի Պալատեան Եպիսկոպոսի Եւ վերոյիշեալ Աւետում պահի. Եւ Զ) Գերապասի Պալատեան Եպիսկոպոսի Եւ Սարգիս Պապ Յակոբեանի, Գեորգ Միխայէլի Եւ Ներսէս Կիւլպէնկեանի, Սարգիս Յարութիւն Եղգարի, Եւ վերոյիշեալ Անիքսոս Ուննեանի Եւ Յակոբոս Յարութիւն Մալոլլի միջեւ կայացած նախկին մի Աւանդագրի (որ յես այսու պիտի կոչուի «Հիմնական Աւանդագիր»), որի համաձայն է 58. 503. 6. 10-ու մի գումար Աւանդի վերածուելով Նորին Սուրբ Օծուքիին Աւանդն Հասասողի հրամանով յանձնուել է Պահապան Աւանդապանին.

ԵՒ ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼՈՎ, որ Հիմնական Աւանդագրի բուականից ի վեր Գերապասի Պալատեան Սրբազան դպարել է Եւրոպայի Թեմում Նորին Սուրբ Օծուքիին Ժամանակիս Ամենայն Հայոց Կաթողիկոսը ներկայացնելուց Եւ այժմ Գերաբնորհ Տ. Թորգոմ Արքեպիսկոպոս Գուշակեան՝ Եգիպտոսի Հայոց առաջնորդը՝ Լիազոր Ներկայացուցիչն է Նորին Սուրբ Օծուքիին Ամենայն Հայոց Կաթողիկոսի Եւրոպայի Թեմում.

ԵՒ ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼՈՎ, որ վերոյիշեալ Սարգիս Յարութիւն Եղգար Հիմնական Աւանդագրի Աւանդապանութեան պաշտօնից կամովին հրաժարուել է.

ԵՒ ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼՈՎ, որ Հիմնական Աւանդագիրը յիշեալ է 58. 503. 6. 10 գումարի վերաբերմամբ որոշ կէտերում չի կարողացել լին Եւ ներառելով արձայայտել Նորին Սուրբ Օծուքիին Աւանդն Հասասողի տուած հրահանգներն ու փափաքները, ինչպէս որ պիտի նշանակուի ստորեւ.

ԵՒ ՎԵՐՋՍՊԷՍ ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼՈՎ, որ Նորին Սուրբ Օծուքիին Աւանդն Հասասողը ըստ որում փափաքում է Հիմնական Աւանդագիրը բարեփոխել ստորեւ նշանակեալ ձեով, Եւ Պահապան Աւանդապանն ու Գործա-

դիր Աւանդապահները Նորին Սուրբ Օծուքիւն Աւանդն Հաստատողի յիշեալ փափաքը իրագործելու նպատակով համաձայնել են սոյն Յաւելուածական Աւանդագիրը ստորագրել .

**ԱՅԺՄ ՍՈՅՆ Ա.Ի.Ա.Ն.Գ.Ս.Գ.Ի.ՐԸ Վ.ԿՍ.ՅՈՒՄ ԵՒ ՓՈՆԱ.Գ.Ա.ՐԶ ՀԱՄԱՅՈՒՅՆՈՒԹԵԱՄԲ ՅԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է, որ**

Սոյն Յաւելուածական Աւանդագրի բուականից սկսած, բայց առանց անդրադառնալու մինչ այդ Հիմնական Աւանդագրի համաձայն կատարուած ու եւ է գործողութեան վրայ, Հիմնական Աւանդագիրը փոխուում է ստորեւ նշանակեալ ձեւով . այսինքն՝

1. Հիմնական Աւանդագրի 2-րդ յօդուածը փոխուում է հետեւեալ կերպով եւ կարդացուում այսպէս,

“Այստեղ գործածուած «Գործադիր Աւանդապահներ» խօսքը վերաբերուում է Առաջին Աւանդապահներին եւ նրանց օրինական յաջորդներին: Գործադիր Աւանդապահները միշտ պիտի լինին Ս. Էջմիածնի Հիմնադրամի Լոնդոնի Կենտրոնական Ֆանձնաժողովի անդամներից եւ պիտի բաղկանան հինգ հոգուց, որոնց ի պատշտով պիտի անդամակցի նաեւ Եւրոպայի Քեմբուր ժամանակի Ամենայն Հայոց Կաթողիկոսը ներկայացնող Հայ Եպիսկոպոսը, որը պէ՛տ է յատկապէս լիազօրուած լինի Նորին Սուրբ Օծուքեան կողմից յիշեալ ի պատշտով անդամի դերը կատարելու համար: Գործադիր Աւանդապահները Ս. Էջմիածնի Հիմնադրամի կատարին, պայմանով որ եթէ բացի վերոյիշեալ ՚ի պատշտով մասնակցող անդամից, միւս ու եւ է մի Գործադիր Աւանդապահ ու եւ է մի պատշտով Ս. Էջմիածնի Հիմնադրամի Լոնդոնի Կենտրոնական Ֆանձնաժողովին անդամակցելուց դադարի, այդ անձը նովին իսկ ինքնաբերաբար (ipso facto) դադարած պիտի լինի Գործադիր Աւանդապահի պատշտովից,,:”

2. Հիմնական Աւանդագրի 8-րդ յօդուածը փոխուում է հետեւեալ կերպով եւ կարդացուում այսպէս .

“Պահապան Աւանդապահը Աւանդագրամից գոյացած բոլոր եկամուտք՝ շահ, տոկոս եւ այլն ստորեւ յիշուած եղանակով պիտի յանձնէ Գործադիր Աւանդապահներին, որոնց տուած ստացագիրը բաւարար յիշեալ գումարի վերաբերմամբ, եւ բնաւ պարտաւոր չպիտի լինի հետեւաւոր իր նպատակին գործածուում են թէ ոչ: Իսկ Գործադիր Աւանդապահները յիշեալ եկամուտքի երկու երրորդ մասը պիտի փոխադրեն Նորին մանակի Ամենայն Հայոց Կաթողիկոսի կամ նորա յաջորդին կամ ժակին, որ Նորին Սուրբ Օծուքիւնը կը նշանակէ այդ գումարն ընդունելու համար՝ աշխարհի ու եւ է մասում հայերի տառապանքներն ամո՛խելու

նպատակով: Եւ Գործադիր Աւանդապահներն կարող են իրենց բացարձակ հայեցողութեամբ եւ իրենց Աւանդապահութեան պատշտով կատարելիս առանց ու եւ է պատասխանատուութեան գործածել եկամուտքի մնացած մասը յանուն Նորին Սուրբ Օծուքեան եւ Հիմնական Աւանդագրի 14-րդ յօդուածի տրամադրութեանց համաձայն, ինչպէս որ իրենք յամարագոյն կը նկատեն Աւանդի նպատակակալների շահի տեսակէտից . եւ այս բանը կատարելիս կարող են նկատի առնել ու եւ է հրահանգ կամ խնդիրք, որ կը կատարուի նամակով կամ ցամաքային եւ ծովային նւագրով, բայց Աւանդագրամի եկամուտք այսպէս գործադրելու աստե՛ն՝ որքան որ հնարաւոր է՝ նախապատուութիւն պիտի տրուի այրիներին եւ 12 տարեկանից վար եղող որբ մանչերին եւ 15 տարեկանից վար եղող որբ աղջիկներին,,:”

3. Հիմնական Աւանդագրի 11-րդ յօդուածը փոխուում է հետեւեալ կերպով եւ կարդացուում այսպէս .

“Պահապան Աւանդապահն ու Գործադիր Աւանդապահները, բացի իրենց վստահուած եւ յանձնուած մի շարք վնասները կայացնելու պարտականից, բնաւ պարտաւոր չպիտի լինին անձամբ գործելու, այլ ըստ պահանջման հարկին պիտի կարողանան Աւանդի հաշուին նշանակել ու եւ է պրոճեսիոնալ կամ առեւտրական անձ եւ կամ գործակալ Աւանդի վերաբերեալ գործերը կատարելու, այսինքն՝ դրամ եւ այլ արժեքուողքեր ընդունելու, յանձնելու եւ կամ ու եւ է այլ գործ կատարելու, եւ եթէ այսպէս փոխանակ անձամբ մի ուրիշ գործակալի միջոցով գործելու հետեւանօք ու եւ է կորուստ պատահի իրանք պատասխանատու չպիտի բռնուեն,,:”

4. Հիմնական Աւանդագրի 12-րդ յօդուածը ջնջուում է:

5. Հիմնական Աւանդագրի 13-րդ յօդուածը փոխուում է հետեւեալ կերպով եւ կարդացուում այսպէս:

“Եթէ ո՛րեւէ անհամաձայնութիւն կամ գաղափարի տարբերութիւն ծագի երկու կամ աւելի Գործադիր Աւանդապահների միջեւ, հարցը պիտի լուծուի Ս. Էջմիածնի Հիմնադրամի Լոնդոնի Կենտրոնական Ֆանձնաժողովում ձայների մեծամասնութեամբ,,:”

6. Հիմնական Աւանդագրի 14-րդ յօդուածը փոխուում է հետեւեալ կերպով եւ կարդացուում այսպէս .

“Գործադիր Աւանդապահները պարտին թէ՛ Մայր Գումարի եւ թէ՛ տարեկան եկամուտքի հաշիւներն ու նախահաշիւները ենթարկել նախ՝ Ս. Էջմիածնի Հիմնադրամի Լոնդոնի Կենտրոնական Ֆանձնաժողովին առ ի վնասութիւն, եւ ապա Նորին Սուրբ Օծուքիւն Աւանդն Հաստատողին կամ նորա յաջորդին եւ կամ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Տեղակալին առ ի հաստատութիւն,,:”

7. Հիմնական Աւանդագրի 15-րդ յօդուածը փոխուում է հետեւեալ կերպով եւ կարդացուում այսպէս .

“Եթէ Գործադիր Աւանդապահների թիւը՝ (բացի վերոյիշեալ ՚ի

Դրուժ  
1/2 Ոսկու

ՍՈՅՆ ՅԱՒԵԼՈՒԾՄԱԿԱՆ ԱԻԱՆԳԱԳԻՐԸ կայացաւ հազար ինն հարիւր երեսուն բուի Փետրուարի հինգին, հետեւեալ երեք կողմերի միջեւ.  
ա) ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒՔԻՒՆ Տ. Տ. ԳԷՈՐԳ Ե-ՐՂ՝ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏ-ՐԻԱՐՔ ԵՒ ԿՍԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԵՒ ՊԵՏ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՅԻՈՅ (որ յետ այսու պիտի կոչուի «Նորին Սուրբ Օծուքին Աւանդն Հաստատող»). բ) ՄԻԴԼԱՆԴ ԲԱՆԿ՝ ԿՏԱԿԱԿԱՏԱՐ ԵՒ ԱԻԱՆԳԱՊԱՀ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ-ԼԻՄԻԹԷԴ (որ յետ այսու պիտի կոչուի «Պահապան Աւանդապահ»). որի հասցէն է 5, Princess Street, Լոնդոն քաղաքում. եւ գ) ՆՈՐԻՆ ԳԵՐԱՊԱՏՈՒՈՒԹԻՒՆ Տ. ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳՈՒՇՍԿԵԱՆ՝ ԱՌԱՋՆՈՐԴ ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՅՈՅ, ԵՒ Ս. ԷՉՄԻԱԾՆԻ ՀԻՄՆԱԳՐԱՄԻ ԼՈՆԴՈՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՅԱՆՉՆԱԺՈՂՈՎԻ հետեւեալ հինգ անդամները. այսինքն՝ ԱԻԵՏՈՒՄ ՊՍԱԿ ՅԱԿՈՒԵԱՆ, ԳԷՈՐԳ ՄԻՔԱՅԷԼ, ՆԵՐՍԷՍ ԿԻԼՊԷՆԿԵԱՆ, ԱՆԻՔՏՈՍ ՈՒՆՃԵԱՆ ԵՒ ՅԱԿՈՒՈՍ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄՍԼՔՈԼՄ (որք յետ այսու պիտի կոչուին «Գործադիր Աւանդապահներ»):

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼՈՎ, որ սոյն Աւանդագիրը յաւելուածական մասը պիտի կազմէ հազար ինն հարիւր քսան եօթ բուի Հոկտեմբերի տասներեփն՝ ա) Նորին Սուրբ Օծուքին Աւանդն Հաստատող. բ) Պահապան Աւանդապահի. եւ գ) Գերապաշի Պալաքեան Եպիսկոպոսի եւ վերոյիշեալ Աւետում պահի. եւ զ) Գերապաշի Պալաքեան Եպիսկոպոսի եւ վերոյիշեալ Աւետում Պապ Յակոբեանի, Գէորգ Միքայելի եւ Ներսէս Կիւլպէնկեանի, Սարգիս Պապ Յակոբեանի, Գէորգ Միքայելի եւ Ներսէս Կիւլպէնկեանի եւ Յակոբոս Յարուժարտին Եղգարի, եւ վերոյիշեալ Անիքոս Ուննեանի եւ Յակոբոս Յարուժարտին Մալոլմի միջեւ կայացած նախկին մի Աւանդագրի (որ յետ այսու պիտի կոչուի «Հիմնական Աւանդագիր»), որի համաձայն է 58. 503. 6. 10-ու մի գումար Աւանդի վերածուելով Նորին Սուրբ Օծուքին Աւանդն Հաստատողի հրամանով յանձնուել է Պահապան Աւանդապահին.

ԵՒ ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼՈՎ, որ Հիմնական Աւանդագրի բուականից ի վեր Գերապաշի Պալաքեան Սրբազան դադարել է Եւրոպայի Թեմում Նորին Սուրբ Օծուքին ժամանակիս Ամենայն Հայոց Կաթողիկոսը ներկայացնելուց եւ այժմ Գերազնորհ Տ. Թորգոմ Արքեպիսկոպոս Գուգակեան՝ Եգիպտոսի Հայոց առաջնորդ՝ Լիազօր Ներկայացուցիչն է Նորին Սուրբ Օծուքին Ամենայն Հայոց Կաթողիկոսի Եւրոպայի Թեմում.

ԵՒ ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼՈՎ, որ վերոյիշեալ Սարգիս Յարուժարտին Եղգար Հիմնական Աւանդագրի Աւանդապահութեան պաշտօնից կամովին հրաժարուել է.

ԵՒ ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼՈՎ, որ Հիմնական Աւանդագիրը յիշեալ է 58. 503. 6. 10 գումարի վերաբերմամբ որոշ կէտերում չի կարողացել լրիւ եւ նշողութեամբ արտայայտել Նորին Սուրբ Օծուքին Աւանդն Հաստատողի տուած հրահանգներն ու փափաքները, ինչպէս որ պիտի նշանակուի ստորեւ.

ԵՒ ՎԵՐՉԱՊԷՍ ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼՈՎ, որ Նորին Սուրբ Օծուքին Աւանդն Հաստատողը ըստ որում փափաքում է Հիմնական Աւանդագիրը բարեփոխել ստորեւ նշանակեալ ձեւով, եւ Պահապան Աւանդապահին ու Գործա-



պատժել մասնակցող անդամից) հրաժարումի, մահուայ եւ այլ ուեւ պատժաւով մէկ կամ աւելի պակաս ունենայ նորը կամ նորերը պիտի ընտրուին Ս. Էջմիածնի Հիմնադրամի Լոնդոնի Կենտրոնական Յանձնաժողովի անդամներից եւ նոյն ինքն Յանձնաժողովի կողմից եւ պիտի ենթարկուին նորին Սուրբ Օծուքիւն Աւանդն Հաստատուի կամ նորա յաջորդի կամ ժամանակի Ամենայն Հայոց Կաթողիկոսի Տեղակալի վաւերացման՝ յատկ Կոնդակով. պայմանով, որ այս վաւերացումը պիտի հաղորդուի Գործադիր Աւանդապահներին նոր անդամի կամ անդամների ընտրութիւնից մինչեւ վեց ամիս մի ժամանակամիջոցում. իսկ եթէ յիշեալ վեց ամսուայ ընթացքում այդ նոր անդամ կամ անդամների մասին ուեւ առարկութիւն չը յայտնուի նորին Սուրբ Օծուքեան կողմից, վերոյիշեալ ընտրութիւնը վաւերացեալ պիտի նկատուի ,:

8. Հիմնական Աւանդագրի 16-րդ յօդուածը փոխուում է հետեւեալ կերպով եւ կարդացուում այսպէս.

“Եթէ պատահի. որ բոլոր Գործադիր Աւանդապահները հրաժարին կամ մերժեն գործել, այդ դէպքում Աւանդադրամից գոյացած եկամուտը՝ վերոյիշեալ Կսակի հպատակին գործադրելու պայմանով՝ կը վընարուի նրան, որին որ նորին Սուրբ Օծուքիւն Աւանդն Հաստատուը կամ նորա յաջորդը եւ կամ ժամանակի Տեղակալը կը նշանակէ գրաւոր կերպով ,:

9. Հիմնական Աւանդագրի 17-րդ յօդուածը փոխուում է հետեւեալ կերպով եւ կարդացուում այսպէս.

“Եթէ ո՛ր եւ է մի սարի Գործադիր Աւանդապահների կարծիքով եկամտի այն մասը, որի բաշխումը բողոքուած է իրենց իրաւասութեանը, ամբողջովին կամ մասամբ պէտք չը լինի գործադրել իր նպատակին, այն ժամանակ մնացորդը՝ իբրեւ պահեստի գումարի շահարկութեան մէջ կը դրուի, նախօրօք յիշուած եղանակով, յաջորդ սարիներում իր նըպատակին գործածուելու համար Ս. Էջմիածնի Հիմնադրամի Լոնդոնի Կենտրոնական Յանձնաժողովի հսկողութեան տակ ,:

10. Հիմնական Աւանդագրի 18-րդ յօդուածը փոխուում է հետեւեալ կերպով եւ կարդացուում այսպէս.

“Գործադիր Աւանդապահները առ նուազն չորս ամիսը մէկ անգամ նիստ պիտի գումարեն Ս. Էջմիածնի Հիմնադրամի Լոնդոնի Կենտրոնական Յանձնաժողովի անդամների մասնակցութեամբ սոյն Աւանդի վերաբերեալ գործերը կարգադրելու համար. իսկ եթէ արտակարգ ժողովի եւ ժողովը օրինաւոր պիտի համարուի երբ ներկայ է Յանձնաժողովի անդամների մեծամասնութիւնը, որի մէջ Գործադիր Աւանդապահներից առ նուազն չորս հոգու ներկայութիւնն անհրաժեշտ է ,:

11. Հիմնական Աւանդագրի 19-րդ յօդուածը փոխուում է հետեւեալ կերպով եւ կարդացուում այսպէս.

